Կ. Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ, Հայ ժողովրդի մասնակցությունը Երկրորդ համաշխարհային պատերազմին /1939-1945թթ./, «Հրազդան» հրատ., Ե., 2001, 135 էջ, 146 լուսանկար:

Երկրորդ համաշխարհային պատերազմին հայ ժողովրդի մասնակցության հիմնահարցը լուսաբանող հայ պատմագրությունը վաղուց կարիք ուներ մի այնպիսի աշխատության, որտեղ ոչ միայն համառոտ և ամփոփիչ տվյալներով վերհանվեր այդ պատերազմում տարած հաղթանակի գործում հայ ժողովրդի ներդրած արժանի ավանդը, այլև, միաժամանակ, տրվեին Խորհրդային Միության հայ և հայաստանցի այլազգի հերոսների, Փառքի շքանշանի լրիվ ասպետների, հայ մարշալների, գեներալների ու ծովակալների ճշված ու լրացված ցուցակները և նրանց լուսանկարները: Այդպիսի աշխատությունն ամենից առաջ հաճելի նվեր կլիներ ընթերցող լայն զանգվածների համար, որոնք հնարավորություն կունենային նաև ամբողջական պատկերացում կազմելու Երկրորդ աշխահամարտին հայերի մասնակցության, տարբեր ռազմաճակատներում ու գորատեսակների կազմում մարտնչած հայ զինվորների, սպաների ու գեներալների կատարած սխրանքների մասին և վերջականապես կազատվեին հերոսների ու գեներալների թվի վերաբերյալ տարբեր հեղինակների աշխատություններում և զասագրքերում տեղ գտած հակասականությունից: Հենց այդպիսի նպատակ է հետապնդում Կ.Ա. Հարությունյանի գրախոսվող մենագրությունը: Աշխատությունն ունի հարուստ ազբյուրագիտական արժեք, քանի որ այն հիմնականում շարադրված է Ռուսաստանի Դաշնության պաշտպանության նախարարության կենտրոնական և Հայաստանի Հանրապետության նորագույն պատմության պետական կենտրոնական արխիվների զատանագերծված ֆոնդերի հիման վրա:

Մենագրությունը պայմանականորեն բաժանված է երեք մասի: Առաջին մասում խիստ հակիրճ, բայց բովանդակալից լուսաբանվել է Երկրորդ համաշխարհային պատերազմին հայ ժողովրդի մասնակցության հիմնահարցը: Նորահայտ փաստերի հիման վրա ցուց է տրված, որ 1941թ. հունիսի 18-ին Թուրքիայի և Հիտլերյան Գերմանիայի միջև կնքված բարեկամության և չհարձակվելու մասին պայմանագրով Թուրքիան դարձել էր ֆաշիստական զավթիչների ռազմավարական դաշնակիցը, քանի որ համաձայն դրա, Գերմանիան և Իտալիան իրավունք էին ստանում իրենց ռազմանավերն անարգել մտցնել Սև ծով: Իսկ երբ ֆաշիստական Գերմանիան 1941թ. հունիսի 22-ին հարձակվեց Խորհրդային Միության վրա, Թուրքիան 26 դիվիզիա կենտրոնացրեց Խորհրդային Հայաստանի սահմանների մոտ՝ հարմար պահի սպասելով այնտեղ ներխուժելու ու մի նոր եղեռն կազմակերպելու համար: Սակայն Ստալինգրադյան ճակատամարտում գերմանացիների խայտառակ պարտությունը ստոր ցնցուղի ազդեցություն ունեցավ Թուրքերի վրա և նրանց ստիպեց հրաժարվել իրենց մտադրությունից: Խոսելով ֆաշիստական Գերմանիայի կողմից Երկրորդ համաշխարհային պատերազմի սանձազերծման և սլավոնական ժողովուրդների հանդեպ անխնա ջարդեր կազմակերպելու Հիտլերյան պլանների մասին՝ հեղինակը մեջբերում է արել 1939թ. օգոստոսի 22-ին Օբերզալցբուրգի զորակայանում երրորդ Ռայխի բարձրագույն զինվորական հրամանատարության հետ հանդիպման ժամանակ Ադոլֆ Հիտլերի ճառից, որտեղ ֆյուրերը հատուկ ցուցում էր տվել իր զորավարներին՝ առաջիկա պատերազմում անխնա բնաջնջել լեհերին, ուկրաինացիներին, բելոռուսներին և ռուսներին՝ տղամարդկանց, կանանց, երեխաներին՝ ուշադրություն չդարձնելով հասարակական կարծիքի վրա: «Այժմ, մեր ժամանակներում, այլևս ո՞վ է հիշում 1915թ. Թուրքիայում հայերի բնաջնջման մասին», - ցինիկաբար ասել էր Հիտլերը՝ իր գեներալներին ոգևորելու համար: Ուստի

պատահական չէր. որ պատերազմը սկսելու առաջին իսկ օրվանից հայ ժողովուրդը մեկ մարդու պես ոտքի կանգնեց պաշտպանելու իր գոյությունը. որովհետև պարզ գիտակցում էր, թե ինչ ահավոր վտանգ է սպառնալու իրեն, եթե Գերմանիան հաղթի Խորհրդային Միությանը, և ռազմական գործողությունների թատերաբեմը տեղափոխվի Անդրկովկաս, որի հարավային սահմաններում, ինչպես արդեն ասացինք, կազմ ու պատրաստ հարձակման էին պատրաստվում թուրքական ենիչերիները: Այնուհետև, հեղինակը բերում է զորահավաքի միջոցով բանակ զորակոչված հայերի թվական կազմի մասին տվյալներ, համաձայն որոնց, ամբողջ աշխարհում ֆաշիզմի դեմ զենքը ձեռքներին մարտնչել է շուրջ 600 հազար հայ, որոնցից ավելի քան 200 հազարը զոհվել է մարտերում: Հեղինակը նշել է նաև, որ պատերազմին հայ ժողովրդի մասնակցության բարձր ակտիվությունը դրսևորվեց ոչ միայն 600 հազար մարդ ռազմաճակատ ուղարկելով, այլև տարբեր զորատեսակների կազմում, բոլոր նշանավոր ճակատամարտերում, պաշտպանական և հարձակողական գործողությունների ժամանակ հայ ռազմիկների ցուցաբերած հերոսությամբ, կրտսեր, միջին, ավագ և բարձր հրամանատարական կազմում հայերի ունեցած բարձր տեսակարար կշռով: Փաստական ստուգված տվյալներով ցույց է տրվում, որ պատերազմի տարիներին հայերից մեկը եղել է ռազմաճակատի, 3-ը՝ բանակի, 5-ը՝ կորպուսի, 22-ը՝ դիվիզիայի, 25-ը՝ բրիգադի, ավելի քան 100-ը՝ գնդի հրամանատար և այլն: Ընդհանուր առմամբ, պատերազմի մասնակիցներից 4 հայորդու շնորհվել է մարշալի, 8-ին՝ ծովակալի, 8-ին՝ գեներալ-գնդապետի, 28-ին՝ գեներալ-լեյտենանտի, 93-ին՝ գեներալ-մայորի կոչում: Գրքի առաջին մասում թվական տվյալներ են բերված նաև Հայրենական մեծ պատերազմի տարիներին /1947թ. նոյեմբերի 1-ի տվյալներով/ շքանշաններով ու մարտական մեդալներով պարգևատրվածների մասին. հայեր՝ 66802 մարդ, վրացիներ՝ 49106, ադրբեջանցիներ՝ 36180 և այլն: Ըստ հեղինակի հաշվումների, Խորհրդային Միության հերոսների թվով ևս հայերը գրավել են առաջնակարգ տեղ: Երկրորդ համաշխարհային պատերազմի տարիներին կատարած սխրանքների համար հերոսի կոչում է շնորհվել 105 հայի և Հայաստանում ծնված կամ ապրած 11 այլազգիների. հետպատերազմյան տարիներին կատարած սխրանքների համար հերոսի կոչում է շնորհվել ևս 3 հայի: Խորհրդային Միության մարշալ Հովհաննես Բաղրամյանին և օդաչու Նելսոն Ստեփանյանին այդ բարձր կոչումը շնորհվել է կրկնակի, վրացիներն ու ադրբեջանցիները կրկնակի հերոսներ չեն ունեցել: Հայերը տվել են 108, վրացիները՝ 89, ադրբեջանցիները՝ 43 հերոս. ընդ որում ադրբեջանցի համարվող հերոսների մի զգալի մասը քլդեր են, եզդիներ, թալիշներ, թաթարներ, լեռնային հրեաներ և այլն: Գրքում թվական տվյալներ են բերված նաև պատերազմի տարիներին Սոցիալիստական աշխատանքի հերոսի կոչման արժանացած 10 հայերի, Հայկական 6 դիվիզիաների, ռազմաճակատում հայերին հրատարակված 16 թերթերի, Հայաստանի տարածքում կազմավորված 7 ոչ ազգային դիվիզիաների վերաբերյալ և այլն: Այնուհետև, խիստ հակիրճ, բայց համոզիչ փաստերով լուսաբանվել են հայ քաջորդիների կատարած սխրանքները տարբեր ռազմաճակատներում ու ճակատամարտերում, բերվել նոր անուններ, որոնք մինչև վերջերս անհայտ էին: Մասնավորապես, հայ պատմագիտության մեջ առաջին անգամ, խոսվում է ֆաշիզմի դեմ տարած հաղթանակում չափազանց կարևոր գործ կատարած անտեսանելի ճակատի մարտիկներ, հետախույզներ՝ գեներալ-լեյտենանտ Հայկ Հովակիմյանի, գեներալ-մայորներ Իվան Աղայանցի, Միքայել Ալավերդյանի, Վյաչեսլավ Գևորգյանի, գնդապետ, Խորհրդային Միության հերոս Գևորգ Վարդանյանի, նրա անբաժան գործընկերուհու և կնոջ՝ Գոհար Վարդանյանի և ուրիշների մասին, որոնց սխրանքները, հայտնի պատճառներով, դեռևս այսօր էլ լիովին չեն լուսաբանվել հայ պատմագիտության կողմից: Գրքում արժեքավոր տվյալներ են բերվել նաև հայ պարտիզանների, սվյուռքահայերի և թիկունքի աշխատողների վերաբերյալ:

Դիտական մեծ արժեք ունի գրքի երկրորդ մասի հավելվածը, որտեղ տրված են Խորհրդային Միության հայ և հայաստանցի այլազգի հերոսների /էջ 42-111/, Փառքի շքանշանի լրիվ ասպետների /էջ 112-126/ և հայ մարշալների, գեներալների ու ծովակալների /էջ 127-135/ ցուցակները: Ընդ որում, հերոսների և Փառքի շքանշանի լրիվ ասպետների ցուցակները տրված են աղյուսակների ձևով և կենսագրական արժեքավոր տեղեկություններ են պարունակում նրանց մասին: Հայ պատմագիտության մեջ առաջին անգամ հետաքրքիր տեղեկություններ են տրված Խորհրդային Միության հերոսներ Վլադիմիր Թամբյանի, Գևորգ Վարդանյանի, Սուրեն Թաշչյանի, Արթուր Զիլինգարովի, Գուրգեն Կարապետյանի, Կարպ Վարֆոլեմեևի, Վալենտին Կոզլովի, Արտաշես Հարությունյանի, Գրիգոր Փալանջյանի, Գեղամ Փիլոսյանի և Իվան Սիմոնովի մասին: Վերջին չորս հերոսները պատերազմից հետո ստալինյան վարչահրամայական բռնակարգի կողմից անարդարացիորեն զրկվել են իրենց կոչումներից: Հեղինակը գիտական տեսակետից շատ ճիշտ է վարվել, երբ հերոսների կենսագրականները տվել է, ոչ թե այբբենական, այլ՝ հերոսի կոչում շնորհելու հրամանագրի հրապարակման ժամանակագրական կարգով: Նույն սկզբունքով էլ դասավորված են գրքի երրորդ մասում տրված հերոսների ու փառքի շքանշանների լրիվ ասպետների լուսանկարները, ընդ որում, 11 հերոսի լուսանկար հրապարակվում է առաջին անգամ: Մենագրությունը կշահեր, եթե տպագրվեին նաև հայ մարշալների, ծովակալների ու գեներալների լուսանկարները, իսկ վերջում ռուսերեն կամ անգլերեն տրվեր ամփոփում: Գրախոսվող աշխատությունն ունի անվիճելի պատմագիտական արժեք, որի շնորհիվ ինչպես Հայաստանի Հանրապետությունում, այնպես էլ սփյուռքում մեծ ընդունելություն կգտնի ընթերցող լայն զանգվածների շրջաններում:

Գ.Ն.ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ